

ՃՐ.ԶԱՌԵՐԱԿԱՆ

Հայրենակիցներ,

Պարտք կը սեպեմ սրտագին շնորհակալութիւն յայտնել նախ և առաջ բոլոր հանգանակիչ մասնախումբերուն ու բարեսիրտ նուիրատուներուն, որ ամէն կողմէ և մինչև իսկ հեռաւոր երկիրներէ, պատասխանեցին մեր կոչին՝ ի նպաստ Կովկաս դաղթող կարօտ ազգայիններուն ու փութացին Հ. Բ. Ը. Միութեան ղրկելու հաւաքուած նպաստները, որոնց համագումարը մեր ակնկալութիւնը գտած է:

Արդէն ցարդ ստացանք և հետզհետէ Տփլիս ու Էջմիածին փոխադրեցինք 60,000 ռուբլի (շուրջ 6,000 ոսկի) և միւս կողմէ զանազան առաքումներ ևս ծանուցած են մեզի, որ նոյնպէս պիտի գան աւելնալ յիշեալ գումարին վրայ, միևնոյն նպատակին յատկացուելու համար:

Բայց այս գեղեցիկ արդիւնքին առջև, որոշուեցաւ փակել Միութեան կողմէ բացուած սոյն հանգանակութիւնը, նկատի առնելով, որ ներկայ ծանր իրադարձութիւնները, որոնց հանդէպ հայութիւնը կարող չէ անտարբեր մնալ, պիտի հարկադրեն, ինչպէս պէտք է նախատեսել, նորանոր զոհողութիւններ ևս. մասնաւոր որ բազմաթիւ նուիրատուներ ինծի ղրկելով իրենց նպաստները՝ ցաւ յայտնած էին, որ բացուած հանգանակութիւնը միայն Կովկասի դաղթականներուն սահմանափակուած է, և այդ առթիւ՝ աւելի ընդհանրական հանգամանք ունեցող հանգանակութիւն մը բանալու գաղափարը կը թելադրէին ինծի: Այդ նպատակով է, որ իմ նախագահութեանս ներքև նոր Յանձնախումբ մը կազմուեցաւ տեղա՝ Ազգային Շահերու Պաշտպանութեան գործին յատուկ հանգանակութեան ձեռնարկելու համար, Հայկական Ընդհանուր Միութենէն դուրս.—որովհետև հետապնդուելիք նպատակը այս բարեգործական ընկերութեան սահմաններէն դուրս կը մնայ, այնպէս, ինչպէս որ իր հիմնական կանոնադրին մեջ նախագծուած է:

Նորակազմ հանգանակիչ յանձնախումբը, որուն հաճեցան նաև Եգիպտոսի հայ հասարակութեանց երեք հոգեւոր պետերը, իր ներկայ կազմութեամբը կը կարծէ պատասխանել պէտքի մը, որ ծնած է քաղաքական ներկայ կացութենէն, և որ կը պահանջէ անխորապէս բոլոր հայերու համագործակցութիւնը այս բաղդորոշ ըոպէին, երբ մեր ազգին ապագան խնդրոյ նիւթ է և իր ճակատագիրը պիտի վճռուի:

Երբէք մեր պատմութեան մէջ ասկէ աւելի նպաստաւոր պատեհութիւն մը ներկայացած չէ. և երբեք մեր ազգային ցանկութիւններն իրենց իրականացումին աւելի մօտ չեն գտնուած: Բայց անհրաժեշտ է ասոր համար, որ ամէն մասնաւոր նախաձեռնութիւններ կեդրոնացունին Ազգային Շահերու Պաշտպանութեան համար, որպէսզի կարելի ըլլայ անոնք համերաշխել ու այսպիսով ապահովել գործողութեանց միութիւնը:

Յորմէհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վստահութեամբ հրաւիրուեցայ ազգային հարցով զբաղելու, իմ պատուական հայրենակիցներս ինծի նկատմամբ իրենց համերշխութեան ոգիին և ազգասիրութեան ապացոյցները այնքան ազնուօրէն տուին, որ հիմա չեմ կրնար կասկածիլ, թէ աւելի սրտանց պիտի չաշխատին անխախտ և սերտ պահելու միութիւնը, որուն ապացոյցներն արդէն տուին Բարենորոգումներու համար բանակցութիւններ կատարած միջոցիս—ամէն տարբերու և կուսակցութեանց միութիւնը, աւելի քան երբեւէ անհրաժեշտ՝ մեր դատին վերջնական յաջողութեան համար:

Ներքին համոզումը ունիմ, որ ամենքն ալ ինծի նման կը զգան ծանրութիւնը, ինչպէս և կենսական, բախտորոշ կարևորութիւնը մեր պատմութեան ներկայ ժամուն, ուր իրաւունք ունինք յուսալու, թէ մեր ազգային արդար ցանկութիւնները պիտի ունենան ընդհուպ այն լուծումը, որուն ամեն հայ կը բաղձայ:

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ.

Մայր Աթոռի Տպարանի վարչութիւնը հնարաւորութիւն չունենալով իւր ժամանակին ստանալ թուղթ «Արարատ»-ի տպագրութեան համար՝ խմբագրութիւնիցս միանգամայն անկախ պատճառով ուշացաւ փետրուար և յետագայ ամիսների «Արարատ»-ի տպագրութիւնը: Արդէն թուղթն ստացուած լինելով՝ կաշխատենք հետեւեալ համարների տպագրութիւնը արագացնել և կանոնաւորել ամսագրիս առաքումն մեր բաժանորդներին:

Խմբագիր՝ Բաբգէն վարդապետ

Աղաւեղեան

40 Մայիսի 4945 Թ.

ս. Էջմիածին.